Գ Լ Խ Ա Վ Ո Ր Տ Ն Օ Ր Ե Ն Ի Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2025 թվականի N ՑՊ-058-12/25

ք. Երևան

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ, ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ (Bbond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ Թողարկող) 2025 թվականի դեկտեմբերի 10-ի հայտը և դեկտեմբերի 18-ին ներկայացված հայտի լրացումը 10,000,000,000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, 100,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 60 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 10.50% արժեկտրոնային տոկոսադրույքով, 100,000 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 19-ի եզրակացությունը,

Հաշվի առնելով, որ ներկայացված պարտատոմսերը և Թողարկողը բավարարում են Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» (այսուհետև՝ Կանոններ) 12-րդ գլխով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Օպերատորի Կանոնների 6-րդ գլխի 29-րդ կետը, 16-րդ գլխի 79-րդ և 80-րդ կետերը, և, ղեկավարվելով 15-րդ գլխի 68-րդ կետի 1-ին ենթակետով, ինչպես նաև Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.58.-րդ կետի 9.58.5. ենթակետով՝ Գլխավոր տնօրենը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. 2025 թվականի դեկտեմբերի 24-ից ցուցակել և պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում ընդգրկել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի 10,000,000,000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, 100,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 60 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 10.50% արժեկտրոնային տոկոսադրույքով, 100,000 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը, որոնց «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ կողմից շնորհվել է **AMACBAB2LER4** ծածկագիրը, միաժամանակ թույլատրել դրանցով հասցեական առևտրի իրականացումը և ռեպո գործարքների կնքումը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված արժեթղթերին շնորհել **ACBABL** հապավումը:

3. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:

4. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ֆինանսական տնօրեն,
Կառավարման խորհրդի անդամ,
Գլխավոր տնօրենի լիազորված ներկայացուցիչ՝ **Դավիթ Շահվերդյան**